

ժառանգելով զայն հիներէն, միջին դարուն պէսպէս կրօնական նկարներով ու զոյներով կը ներկէին զատկի օրը, եւ օրհնելով՝ բարեկամաց կը նուիրէին: Եւ համոզուած եմ՝ թէ այդ շրջանին եւ արեւմուտքէն մտաւ մեր մէջ ալ կարմիր ձուն. ուրով անձանօթ է մեր երիցագոյն մատենագրաց, եւ կը պակասի դեռ Արշարունւոյն զատկական ճաշի մանր նկարագրին մէջ ալ (աստ, 368-9):

Հակթին ճաշակումն սկսաւ կանխել քան զգառին ալ: Տաթեւացին կ'ըսէ՝ թէ «փրկութեանն մերոյ (այս ինքն մեր փրկութեան այդ օրինակին) է հաղորդելի նախկին, եւ ապա յայլ կերակուրս» (Քրդ. ձմր. 606): Նոյնը կը խրատէ Յովհ. Եզրնկացին եւս. «զատիկն եւ կարմիր ձուն՝... անօթի եւ առանց ուտելոյ» նախ ուրիշ բան (Ճճ. ԻԳ): Ասոնց տեղեկութիւնը կը լրացնէ 1650ին ի Կ. Պոլիս գրուած տօնացոյց մը, որ կ'ըսէ՝ թէ աւագ հինգշաբթի օր եօթներորդ ժամուն երբ կը ժողովին եկեղեցւոյ դուռը, «աշինն աղ զգատկի գառին եւ խմոր եւ հաշիք նմին», ուրեմն ձուն ալ կ'օրհնէին: Եւ խթման երեկոյին կը յաւելու՝ թէ «է առաջին կերակուրն կարմիր ձուն»: Շատ տարօրինակ է իւր յորդորը՝ զոր այս տեղ կու տայ. «Թէ